# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 15 /տասնհինգ/ անդամներ, բացակայում էին ավագանու 12 /տասներկու/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 15/տասնհինգ/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Արմինե Աղամանյանը, Տիգրան Բաղդասարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Մանուկ Գևորգյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Հովհաննես Սահակյանը, Գայանե Մինասյանը, Ոսկան Վարդանյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը, Ժաննա Ասատրյանը, Արթուր Աստոյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտակ Հարությունյանը, համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը և Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության,անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար սահմանելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

2. <<Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի>> նախաձեռնությանը վերամիանալու համաձայնություն տալու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Լաուրա Սերյոժայի Պետրոսյանին ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով հողատարածք օտարելու և օտարման գին հաստատելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> <<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>, <<Փոքր Մանթաշի արվեստի դպրոց>> աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 227-Ա որոշման 14, 15, 32 հավելվածները ուժը կորցրած ճանաչելու մասին»:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

6. Հայաստանի հանրապետության շիրակի մարզի արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի առաջին գումարման նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Օրակարգը հաստատվեց կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (15)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Միանասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |
| Աստոյան Արթուր | | |

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը, այն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար սահմանելը:Նա նշեց, որ համաձայն գործող օրենքի ավելի բարձր դասային աստիճան շնորհվում է տվյալ պաշտոնը համապատասխան դասային աստիճանով երեք տարի անընդմեջ զբաղեցնելուց հետո: Առաջարկվեց հավելավճարը սահմանել աշխատավարձի պաշտոնային դրույքաչափի5%-ի չափով: Ա.Աստոյանը կատարեց հարցադրումներ, որոնց պատասխանեցին Ա.Սուքիասյանը և Ա.Ոսկանյանը:Մ.Վարագյանը հարց բարձրացրեց տոկոսադրույքի վերաբերյալ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (13)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Միանասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

**Դեմ (0)**

**Ձեռնպահ (2)**

Վարդանյան Ոսկան

Աստոյան Արթուր

Օրակարգի 2-րդ հարցը նույնպես ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը:Հարցը <<Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի>> նախաձեռնությանը վերամիանալու համաձայնություն տալու մասին է: Նա նշեց, որ 2014 թվականից Արթիկ համայնքը հանդիսանում է վերոնշյալ դաշինքի անդամ, և հիմա երբ լրացել է անդամակցության ժամկետը, անհրաժեշտություն է առաջացել ավագանու կողմից տալ համաձայնություն տվյալ դաշինքին վերամիանալու համար:Հարցեր և առաջարկություններ չեղան: Հարցը դրվեց քվեարկության: Քվեարկություն՝ կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (15)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Հարությունյան Արտակ

**Դեմ (0)**

**Ձեռնպահ (0)**

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Միանասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Աստոյան Արթուր

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության բաժնի պետ Ա.Գրիգորյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Վարդաքար գյուղի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից 2-րդ փողոց 17 հասցեում գտնվող Լաուրա Սերյոժայի Պետրոսյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Վարդաքար գյուղի 2-րդ փողոց 17/1 հասցեում գտնվող 0,16217հա մակերեսով հողամասը՝ որպես ընդլայնում ուղղակի վաճառքով Լաուրա Սերյոժայի Պետրոսյանին օտարելու մասին:Որոշվեց ողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 514,8(հինգ հարյուր տասնչորս դրամ ութ լումա):Հարց բարձրացրեց Ա.Աստոյանը: Նա նշեց, որ նմանատիպ հարցով այլ քաղաքացիներ ևս դիմել են նման դիմումնեով, սակայն նրանց դիմումին դեռևս ընթացք չի տրվել, նշելով դիմումատուի անուն ազգանունը: Բարձրացված հարցին պատասխանեց Ա.Գրիգորյանը: Նա նշեց, որ տվյալ դիմումի մեջ կան չափագրական փաստաթղթերի խնդիրներ, որոնք կարիք կա ուղղելու, դրանից հետո գործին կտրվի համապատասխան ընթացք: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 15, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (15)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Աղամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Միանասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Աստոյան Արթուր

Օրակարգի 4-րդ և 5-րդ հարցերը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը:Նա ներկայացրեց որոշման նախագիծ, դրանք են՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափեր մասին>> թիվ 227-Ա որոշման 14, 15, 32 հավելվածներում փոփոխություններ կատարելու ,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:Նա նշեց որ կառավարության որոշմամբ համայնքի կազմի մեջ մտնող Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Սարալանջ բնակավայրերը հանվում են բարձրլեռնային բնակավայրերի ցուցակից, դրանով պայմանավորված նշված բնակավայրերում պաշտոնային դրույքաչափերի համար վճարվող հավելավճարները հանվել են:Ավագանու անդամների միջև տեղի ունեցավ քննարկում, որից հետո օրակարգի հարցը դրվեց քվերկության և ընդունվեց կողմ՝ 15, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (15)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Միանասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Աստոյան Արթուր

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի առաջին գումարման նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանելու մասին:Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու առաջին գումարման նստաշրջանի հերթական նիստի օր և ժամ սահմանել 2023 թվականի փետրվարի 07-ին, ժամը՝ 15:00-ին:Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 15, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (15)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Միանասյան Գայանե | | |

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Աստոյան Արթուր

Վերջում Արթիկ համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց աշխատակազմին լավ կազմակերպված աշխատանքի համար, նաև շնորհավորեց բոլորի գալիք տոները՝ մաղթելով խաղաղություն, հաջողություն և բարօրություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք

28 դեկտեմբեր 2022 թվական